

Թղյամին ծաղր առնելով՝ ասաց, այս չէմքից հեռացիր,
Զի գոյնզգոյն ցաւըրին զինին քաղցրանկատ չի արժիլ.
Թէպէս դիւրին եմ ասել ես ծովագնացութեան շահը,
Ախալ եմ, ամէս ծփման հարիւր անզամանդ չի արժիլ.

Գնա՛, զայիր զանձ գուութեան և անկիւն մի առանձնութեան,
Զի դուզնաբայ սոտուանաց եկամուտն առատ չի արժիլ:
Հաֆիզին պէս բաւական լէր, ունայն աշխարհից ձեռք քաշէր,
Ցիմարից պարտաւորվելոյն բիւր ոսկի, արծաթ չի արժիլ:

Յ. ԹԻՐՈՒԱՐԵԱՆ

ՀՆԱԳՈՅՆ ԱԻԵՏԱՐԱՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՅ ՀԱՅՈՅՑ Ս. ՅԱԿՈԲԱՅ ՎԱՆՈՒՑ

1900 թուին Պօլսոյ Հայոց թերթերը, Բիւրակն թիւ 28, 30, Բիւրակնիոն թիւ 1150, Սուրբանաղակ (թիւ 447) և մասնացիստական Հանդէս Ամսօրեայ և թանասէր (էջ 355-57 և 117-18) միմեանցից փոխ առնելով հրատարակեցին, որ Երուսաղէմի Հայոց վանքում կայ մի երկաթազիր մազաղաթեայ աւետարան՝ գրուած փրկչական 602 և Հայկական Ծի թուակնին: Եղան կասկածով վերաբերուողներ, իսկ հետաքրքրուողները սպասում էին որ Երուսաղէմի կարող միարանները աւելի ճիշտ և աւելի որոշ բացատրութիւն կտան: Եւ ժամանակուայ մատենադարանապետը՝ Սահակ Հեպիսկոպոս Խապայեան՝ այժմ կաթողիկոս Միհծի տանն կիլիկիոյ՝ եկալ Հանդէս Ամսօրեայի մէջ (1901, էջ 33-35) իւր խօսքն ասելու:

«Պէտք է խոստովանիլ որ Երուսաղէմի Աւետարանը չունի գրչէն յիշատակարան, որովհետև վերջին թուղթի ինկած կ'երեւայ. բայց ասոր փոխարէն թուղթ 7^o, զարդախորանի մը երեք դատարկ սիւնակաց ձախ կողմի սիւնակին մէջ տարբեր գրչաւ ու բանարով» տարեթիւն ու զրչի անունն ունի, որ «կրկնուած է աւետարաններուն վերջացած տեղերը Այս մասին», շարունակում է յօդուածագիրը, աւելի «ըսելիք

չունիմ, ուստի ի բաւականութիւն բանասիրաց կանցնիմ աւետարանի նկարազրութեան և ըրած բաղդատութեանց արդեան»:

Գերապատիւ Հայրը նկատելով հանգերծ, որ յիշատակարանը «տարբեր գրչաւ ու թանաքով» է, իւր նկարազրութեան մէջ իրբեւ հաստատուն թուական նշանակում է յիշատակարանի տուածը: Այդպիսի բացորոշ յայտարարութիւնից յետ՝ մասնագէս շրջաններում համարեան վերջացած խնդիր նկատուեց, որ եւթներորդ դարու սկզբից, կամ մինչեւ անգամ վեցերորդ անկիրուատ պահուել է հայերէն մի ձեռագիր: Այդքան պատկառելի հնութիւնը առաջնակարգ կարեւորութիւն էր ստանում թէ՝ Աւետարանի ընազրի տեսակէտից և թէ՝ մանաւանդ հայերէն տառելի պատմութեան համար:

Անցած 1907 թուականի ամառը, երբ Երուսաղէմի մատենադարանի հետ ծանօթանալու նպատակով այստեղ այցելեցի, բնականաբար շատ էի հետաքրքիր տեսնելու և ուսումնասիրելու այդ պատկանիւ հնութիւնը Աւետարանի հետ ծանօթութեան արգինը Պօլս Հ. Քարկէն վարդապետին, իմ զրած մի մասնաւոր նամակի շնորհիւ, արդէն հրատարակուել

է և լրագրական նոր յօդուածների առիթ է տուել¹: Ալդ արդինքը այս է: Երուսաղէմի Աւետարանի թուականը կոպիտ կեղծիք է, այնքան անշնորհք կերպով կատարուած, և այնցան տեսանելի իւրաքանչիւր հետախուզողի համար, որ հարկ չկար այդ կեղծիքը հրապարակի վրայ դնել և մտքեր զրադեցնել:

Սակայն նախատեսում էի, որ այդպիսի վճռական յայտարարութիւնը բաւական չի լինելու ամենքին համոզելու, ուստի նկարել եմ լուսանկարներ, որից կիշտաներ պատրաստելով հրատարակում եմ յօդուածիս հետ: Այս առթիւ կարեւոր եմ համարում յայտնելու, որ Երուսաղէմի ամենապատիւ Յարութիւնը պատրիարքը և ամբողջ միաբանութիւնը ինձ ամենամեծ զիւրութիւն տուին թէ այդ Աւետարանը քննելու և թէ ծանօթանալու վանքի նշանաւոր մատենադարանի ամրող քրովանդակութեանը հետ: Նորա լաւ ըմբռնել են որ մեր նախնիքներից մնացած հնութիւնները, որոնք համարեա բացառապէս նուիրատուութեամբ են ժողովուած այս կամ այն նշանաւոր ազգային կամ օտար հաստատութեանց մէջ, անհրաժեշտ է լայն բանալ այդ հնութիւններով մասնագիտորէն պարապողների առաջ: Երուսաղէմի մատենադարանը մինչեւ օրս անյայտ մնացած կարեւոր յիշտակարաններ շատ ունի և ես մօտ ապագայում առիթ կ'ունենամ ընդարձակօրէն խօսելու այդ մասին:

Հնագոյն Աւետարանը մինչեւ վերջին ժամանակը պահուած էր պատրիարքարանում, բայց երբ ես աշխատուած էի այն տեղ, պատրիարք հայրը բարեհանց ձեռագիրը յանձնել մատենադարանապես Մեսոպ վարդապէտ նշանեանին, որ տանի մատենադարան, միւս ձեռագիրը կարգին համարով որոշի և մտցնի ցուցակի մէջ: Այժմ այդ ձեռագրի համարն է 255:

Սահակ եպիսկոպոս Խապայեանը իւր յիշեալ յօդուածում զլիխաւորապէս ծան-

1. Ապրիլ 1907 միւ 6642 և 1671 Բարէկին վարդապէտ և Տրդան եպիսկոպոսի յօդուածները:


րացել է Մոսկուայի և այդ ձեռագրի տարրեր ընթերցուածների վրայ. իսկ արտաքին նկարագրութեան վրայ յատուկ ուշագրութիւն չի դարձրել: Աւետարանի թուականը անկասկած կեղծ է. չափազանց բացորոշ է կեղծողի թէ՛ ժարձրել: Աւետարանի թուականը անկասկած համար է, որ համար է անձնաւորութեանը, սակայն ձեռագիրը շատ հին է, իմ համոզմամբ հնագոյնը մինչեւ օրս հայերէն թուականով թէ՛ անթուական ծանօթ բազմաթիւ ձեռագրերի շարուաւմ: Ալդ ապացուցանելու համար է որ պէտք եմ համարում տալ նրա նկարագրութիւնը՝ մի փոքր աւելի ընդարձակ:

Հին է, հազուագիւտ ու արտասովոր՝ մագտարը. չափազանց ուշագրաւ են տառերը. անպայման հին են և հնագոյն օրինակների հետեւողութեամբ նկարուած այն սակաւաթիւ քարդեր ու նկարեները, որոնցով զարդարուած է Աւետարանը:

Մագաղարը՝ 43 × 29,5 սանտիմետր մեծութեամբ կոպիտ է և հաստ: Արհեստաւորը գրութեան այդ նիւթին չի կարողացել տալ ոչ այն բարակութիւնն ու սպիտակ փայլը, որ յատուկ է Ժ-ԺԲ դարերի հայկական մագաղաթեայ ձեռագրերին և ոչ այն փափկութիւնն ու թաւշանման նրութիւնը, ինչպիսին պատրաստում էին կիլիկեան շրջանի արհեստաւորները: Մագաղաթի գոյնը սրճագոյն-անմաքուր է, թերթերը կարծես պարկի կտորներ են, մասամբ ժամանակի ազդեցութեամբ սեւացած և փայտի պէս կոշտ: Աւետարանում կան թերի մասեր, թերթեր են ընկել. պահուած թերթերի թիւն է 256:

Տառերը չորս տեսակ են: Ամրող բնագիր գրուած է խոշոր երկաթագրով. խորանների միջի կտսերեան թուղթն ու կանոնները համարարրաոի տողակամարներն ու գլխակարգութեանց բնագրերը փոքր երկաթագրով են, Մատթէոսի և Պուկասի սկսուածքները մի մի երես ներկայացնում են չափազանց խոշոր զարդագրեր՝ իրենց գծագրութեամբ նման յունական գլխագրերին: Յատկապէս մի տառ, և-ն գրուած է միանգամայն նման յունական և տա-

ոխն - հաստատելոց ի մեզ որպիս աւանդեցին. (Ղուկ. Ա. 1). և վերջապէս Մարկար կամ ու Յովհաննու սկսուածքի առաջի երեսներն ունին աւելի խոշոր երկաթազրեր, որ իրենց գծագրութեամբ նման են հայկական հնագոյն արձանագրութիւնների տառերին: Եղկու տեսակ երկաթազրերը կարելի է տեսնել մեր առաջին նկարում:



ցոյց տալ թէ այդ արտաքին ապղեցութիւնների չափը և թէ մանաւանդ հայերը ինչ ձեռով են արտայայտել իրենց ինքնուրոյն ճաշակը: Որովհետեւ, ով առիթ է ունեցել տեսնելու հայ մանրանկարչութեան օրինակներ, պէտք է համոզուի, որ հայ արուեստագիտները սոսկ ընդօրինակողներ չեն, այլ ընդհակառակը՝ ինչպէս ճարտարապետութեան մանրանկարչութեան մէջ եւս մշակել են իրենց առանձնայատուկ ոճը:

Երուսաղէմի աւետարանի հորուսներն ու սակաւաթիւ եկարները գծուած են յունականի հետեւողութեամբ: Այդ ապացուցանում են ամենից առաջ յունարէն վերտառութիւնը նկարներից մէկի վրայ և ապա խորանազարդերի սիւների ոճը:

Մեր պատրաստել տուած երկրորդ կիշելից երկու նպատակի է ծառայում, նրա վրայ կայ կեղծ յշշատակարաններից մէկը՝ ամենից ընդարձակը և միեւնոյն ժամանակ նա կատարեալ զաղափար է տալիս աւետարանի զարդանկարների մասին: Խորանազարդեր հայկական ամենահին ձեռագրերում շատ սովորական են. Էջմիածնի փղոսկրեայ Աւետարանի մէջ կան նաև ասորական նկարներ. ասորի նկարիչների գործ և հայերէն պատկերներ: Երուսաղէմի աւետարանի նկարիչը անկասկած հայ է, բայց նա ընդօրինակութեան համար օգտուել է յունական յատկապէս այն շրջանի ձեռագրերից՝ երբ հին դասական արուեստի ազգեցութիւնը դեռ շատ զօրեղ էր: Այն խորանազարդը, որ մեր առաջն է զրուած, ներկայացնում է յունական հեթանոսական շատ սովորական տաճարներից մի ամենապարզ նկար, որի վերաբաղրութեան մէջ պահուած են հին դասական ձեւերը՝ ենթարկուած քիւզանկական արուեստի առաջին շրջանների աղաւաղումներին, համեմատ ժամանակի ճաշակին: Այդ յունական գեղեցիկ տաճարազարդը բազկացած է ութ սիւնից, որոնց վրայ բարձրանում է շինութեան ծածկը իւր սրաձեւ ճակատով: Այներն ունին յոնիական ոճի սեան առանձնայատուկ մա-

կարեան ճեմարանի Աւետարանը և թէ մեր աեսած բազմաթիւ հին երկաթազրերի ձեռագրեր չունին այս օրինակի զարդագրերի ու խոշոր երկաթազրերի նման տառեր: Իսկ այս տառերը ոչ միայն արտասովոր են, այլ անկասկած հին են:

Հնութեան կնիք են կրում մանաւանդ խորանները: Հայոց մանրանկարչութեան պատմութիւնը զեռ չէ գրուած: Այդ արուեստը Հայերի մէջ օտարամուտ է. գրլիսաւոր աղքիւրը ծառայել են քիւզանկական օրինակներ, աւելի կանոնի ասորականը, իսկ վերջերը եւրոպականը և նոյն իսկ պարսկականը: Մանրակրկիտ ուսումնասիրութեան է վերապահուած բացորոշ

1. Բազզատել մեր նկարը Հ. Աւետանի Այրուրատ էջ 188, 189. արձանագրութիւններին.

սերք՝ բնորոշ խարիսխներով և խոյակներով։ որոնց նմանութեամբ հայկական մասնաւարչութեան մէջ չի յաջողուել տեսնելու։ Այսովէնտեւ բազմաթիւ աւետարաններում շատ սովորական խորանազարդերի սիւները ներկայացնում են աւելի շատ զարդեր քան հաստատութիւն պատկերացնող սիւներ։ Նկարի բնագիրն ունի պարզ ներկեր, իսկ մեր կլիշէն չափազանց փոքր է և ոչ այնքան յաջող։ (Տես նկար Ա)։



Աւետարանի միւս նկարներն են. Ա. թղ. 1^ւ. Ամբողջ էջի վրայ խոշոր խաչ հաւասարաթեւ, 8 ճաճանչով, որ պարագակուած են շրջանների մէջ։ Այդ խաչը ամբարակած է յատուկ պատուանդանի վրայ։

Բ. թղ. 2^ա. Խորան, հաստատուած երկու բիւզանդական սեան վրայ՝ մի էջում Եսաւերիսի առ կարպիանոս թուղթը։ Խորանը կիսաշրջանածեւ է, որի միջի դաշտը զարդարած է քառանկիւնածեւ զարդերով։ Երջանի անկիւններում նկարուած են ծաղիկներ, մէջտեղը մի կողով, իսկ կամարների վրայ թառած են սիրամարգներ։

Գ. Այդ հիմնական նկարի տարրեր փոփոխութիւնները կրկնուած են Եւսերի թղթի շարունակութեան (թղ. 2^ւ) և կանոնների խորաններում (թղ. 3^ա, 6^ւ) թուղթ եօթ հատ։ Փոփոխում են նոյն խորանի սիւների թիւը՝ 2, 3 և 4, խորանա-դաշտի զարդի ձեւը, կամ թոշունների կանգնած տեղերն ու զիրեցքը և կամ իրենց թոշունները։ Սիրամարգի փոփոխէն նկարուած են աղանիներ կամ կարաներ։ Նկարելի է որ նկարիչը մտածել է տեսակաւորելու իւր գործը։ Նոյնութեամբ նա ոչ մի նկար չէ վերատաղրում։

Դ. Մեր նկարագրած տաճարազարդը (թղ. 7^ա)։

Ե. Չորս Աւետարանիշները նկարուած են ոչ թէ ինչպէս յիտոյ է սովորական տեսնել՝ իւրաքանչիւր Աւետարանի բնագրի սկզբներում, այլ իրրեւ խորանազարդերի շարունակութիւն՝ (թղ. 7^ւ և թղ. 8^ա) երկու նոր խորանազարդի տակ երկու երկու։ նախ՝ «Մաթիոս» և «Մարկոս» և ապա «Ղուկաս» և «Յովհաննէս»։ Բոլոր չորսը միանգամայն իրար նման են. ուն face, աջ ձեռները բարձրացած օրհնութեան նշան են անում, իսկ իրանց ձափի ձեռներին մէջ, որ նկարի մէջ համարեաթէ անտեսանելի են, բռնած ունին աւետարանը։ Էջմիածնի Աւետարանում եւս Աւետարանիշները նկարուած են այս ձեւով, սակայն անհամեմատ աւելի գեղեցիկ արուեստով։

Զ. Մի մեծ քառանկիւնի շրջանակի մէջ (8^ւ) նկարուած են երկու տեսարան. վերեւում Աստուածամայրը զահի վրայ բազմած, զրկում ունի Յիսուս մանկան, որը ձեռները կարկառել է դէպի իւր մայրը։ Աստուածամօր լուսապսակը զարդարուած է թանկազին բարերով, իսկ Յիսուսն ունի յունական խաչ։ Նկարից բարձր՝ նըւկարչի ձեռքով գրուած է յունարէն մակարութիւն, թէեւ ոչ այնքան որոշ, բայց կարելի է մօտաւորապէս կարդալ՝ «XP» և «ΑΓ»։

Այսունից ներքեւ պատկերացրած է իսահակի զոհը։ Արբահամը կանգնած է

աչքելս վերեւ յառած, աշ ձեռին մի մեծ զանակ, վառուած խարցյալի վրայ նա պէտք է բարձրացնէ իւր մօս կանգնած խահակին, Փոքր հեռու, մի ծառի տակ երեւում է զոհի զառը, խակ բարձրից երեւացող ձեռը ցոյց է տալիս այդ զոհը: Այս նկարն էլ ունի մակագրութիւն, տղել բուլրգորվ: «Արքամ զորդին ընճա է»:

Ամբողջը շատ հասարակ գործ է, հետաքրքիր և կարեւոր միայն արուեստի պատմութեան համար:

Է. Յիշուելու արժանի են իրեւ զարդեր՝ երկու խաչ՝ Նկարուած Մատթէոսի և Ղուկասի սկսուածներում. Փոքրացրած կրկնութիւն առաջի մեծ խաչի. ապա խորանազարդեր միւս երեք աւետարանների սկիզբներում, որոնց մէջ փոքր երկաթազրով գրուած են զլիոց ցանկը և ձեռազրիս մէջ զանուած համառօտ ընթերցուածոց ցուցակը, և վերջապէս փոքրիկ խաչազարդեր ու տերեւազարդեր, որոնցից առաջինները որոշում են Աւետարանի գըլխաւոր ընթերցուածների հատուածները. միւնների մէջ ինչոր գրերով սահմանուում են տետրահամարները, սկսած ա – ը տառը:

Ա. Աւետարանի բնագիրն սկսում է նախ թուղթ Եւսեբեայ, ապա կանոնք համաձայնութեան, յետոյ թղ. 9^o – 40^o. Աւետարան ըստ Մաթէեոսի:

Սորա մէջ պակաս են. զլուխ դ. 11–Դ 6, ե 32–Լ 4, Ը 3–ԺԱ 23, ԺԹ 12–23, ԺԵ 33–ԻԶ 53.

Բ. թղ. 41^o – 91^o. «Զաւետարան ըստ Մարկոսի» վերջ. «զի երկնչեին»: Այսիշապէս կցուած է. «Աւետարանացյոց Մարկոսի զիսոց: Ա. Ցովաննու քարոզութիւնն. Ե. Յիսուսի մկրտելն. Թ. Յիսուսի քարոզութիւնն. ԺԲ. Մտանել ի կափառնաւում. ԺԵ. Գնալով ի տուն Այմովնի. ԺԲ. Բորբոտին. Ի. Անդամալուծին» են:

Սորա մէջ թերի է. «զամենայն զառակն զիստեցէր... վաղվաղակի առարէ մանգազ»:

Գ. թղ. 92^o – 177^o. «Աւետարան ըստ Ղուկա», որից պակաս են Ա. 8–22, բա-

յի այդ չունի իթ. զլեւ 43 և 44 յայտնի տները:

Թ. թղ. 177^o – 235^o. «Աւետարանացյոց Յովհաննու. Ա. ի սկզբանէ էր բանն. Բ. Զաստուած ոչ ոք ետես. ԺԹ. ի վաղիւ անդր. ԺԲ. Կոչումն Փիղապոսի». Ան, թղ. 178^o. «Աւետարան ըստ Յովհաննու»: Չունի զլ. Զ. 62–Բ. 23:

Աւետարանի վերջում (թղ. 235^o) տօնական ընթերցուածոց կարգն է, առանց յատուկ գլխազրի. – «Երկրորդ զուրեղային բան Անարէն եղին ի վերայ իմ տէր տէր: Աւետարան ըստ Ղուկա. մէա, Ովէ մեծ բազմեալն երես. վջ. ելաց դառնապէս»:

Երկրորդ գարդային: «Փրկեա զիս ի թղշնամեաց. Աւետարան ըստ Մարկոսի ճկը. և ասէ ցնոսա Յիսուս ամեննեցին զա. վջ. Մկան լալ».

«Պորդորդ գարեղային. Նորա ի ձեռանէ ցումէ մերժ. Աւետարան ըստ Մաթէոսի. մծէ. յայնժամ ասէ ցնոսա Յիսուս վջ. Թովին զնա և փախեան» են:

Իրեւ շարունակութիւն այս ընթերցուածների կարգուած է այս գլուխը. «Խրատք սրբոյ աւետարանին կարգելոյ. կիրակէ որ քան զայտնութիւնն առաջի հանդիպի. Աւետարան ըստ Ղուկա. ա. ցանզի բազումք»: Այս վերնազրի տակ կարգուած են երկու երեսի խորանազարդ չորս սինեակների մէջ իշնդեան, Յայտնութեան, Ղազարու և Աւագ շարաթուայ Աւետարանները:

Բնթերցուածները որոշուած են, ինչպէս վերեւ յիշուեց բուն բնագրի մէջ. Աւագ տօններին խաչածեւ զարդով, խակ լուր օրերինը շակերտածեւ զարդով:

Աւետարանի բուն բնագրիրը ունի շատ կարեւոր և ընտիր ընթերցուածներ, ընդհանրապէս աւելի մօս է Զօհրապեանի տպագրին քան Լազարեան Ճեմարանի Աւետարանին: Այդ բանում կարող է ընթերցողը համոզուել ծանօթանալով: Ահա հակ եպիկոպոսի բաղդատութեան հետ (Հ. Ամս. 1991, էջ 75–77), իսկ մենց առ այժմ չենք հրատարակում մեր բաղ-

զատութիւնը : Մատթէոսն ու Ղուկասը չունին Աւետարանացոյցք :

Աւետարանս չունի հին յիշատակիարտն. թէ արդեօք ունեցել և կորել է, դարձեալ գծուար է պնդել, որովհետեւ ձեռազրի միջին են միայն թերթեր պակաս, բոլոր Աւետարանների վերջի թերթերը կան . թերի չէ նոյնպէս Յովհաննու Աւետարանի վերջում « Խրատը սրբոյ Աւետարանիս կարգելոյ» յօդուածք : Առ առաւելին կարելի է ենթադրել որ այդ յօդուածից յետոյ գրուել է բուն յիշատակարանը և ընկել կորել է: Հաւանական է ձեռազրի յիշատակարան չի ունեցել :

Իսկ նոր յիշատակարանները . նոքա բազմաթիւ են, գրուած «տարրեր գրչով և թանաքով», իսկ այդ գրին է Տիգրանակերտի Մկրտիչ հրաշագործ անուանեալ եպիսկոպոսը :

Ա. Թղ. Չ^ս. Լուսանցում, նոտրգորով . « ես Մարիամն ծառայ սուրբ Յովհանիսին որ տամ խարած յամէն տարի թ. գրամ »: Միայն այս յիշատակարանն է, որ չէ գրել Մկրտիչ եպիսկոպոսը: Այս տեղ յիշուած սուրբ Յովհաննէսը Մշոյ վանքերից մէկն է, որովհետեւ Երուսալէմում ինձ իրը հաստատ տեղեկութիւն հաղորդեցին, որ Մկրտիչ եպիսկոպոսը այդ ձեռազրի վերցրել է Տարօնի վանքերից :

Բ. Թղ. 7^ս. « Եց թուական իշլ. Զ՞՞թ. գրեցաւ յաւձի. – յԱւուրս Մուշէզի Գիրգոր էրէցէ... այն յիշատակարանն է, որ կայ մեր հրատարակած խորանավարդի մէջ. և, կարծում ենք, շատ զիւրովթեամբ իւրաքանչիւր ոք կ'համոզուի, որ այդ գրութիւնը « մողեռն »է :

Գ. Թղ. 7^ւ. Աւետարանիչներն ձեռներին ունին Աւետարան . Մատթէոսի ձեռում բռնած Աւետարանի վրայ գրուած է « յամի տեան ՈՒ », Մարկոսինը՝ « հայոց ՄԱ. »:

Դ. Թղ. 9^ս. Շղագրով « Սուրբ Աւետարանս զոր խոստացայ ընծայել յիշատակ թանգարանի սրբոյ Երուսալէմի Յակովեանց սրբազան առաքելոց վանուց, ահաւասիկ ի ձեռն մեծապատի Մինասեան

մահտեսի Յովհաննէս էֆէնտուն յղեցի . մալ ի նոյն թանգարանն յիշատակ յաւփտինական : յամի 1872 յունիսի 12 ի վիզանակերտ . Մկրտիչ եպիսկոպոս Տիգրանէ : Յովհաննակութեամբ սորա նման մի յիշատակարան կայ նաեւ թղ. 25^ր :

Ե. Թղ. 4^(թ). Վերջ Մատթէոսի « Թզ. ծա »: Տես մեր առաջին նկարը ուր այդ « նշանաւոր » գրիչը փորձել է մի մարդու գլուխ եւս նկարել :

Զ. Թղ. 91^ւ. Մարկոսի Աւ. Վերջում « թուին հայոց ՄԱ. յաւուրս մուշէզի տեառն Տարոնոյ յոծ թղրի »: Գրիչը սկիզբը փորձել է յիշատակարանը գրել խորանազարդի մէջ, նկարել է մի փորը և մի մեծ թ, ապա գրել է ստորին լուսանցքում :

Է. Թղ. 177^ր. Պուկասի Աւետարանի վերջում « թ. վին. ծա. »:

Ը. Թղ. 235^ւ. Յովհ. Աւ. Վերջում. « թզն ՈՅ. ծա. տեառ »:

Թ. Թղ. 236^ւ. բոլորովին Վերջում. « թզ. ծա. »:

Այս բոլոր յիշատակարանները գրուած են նոյն ձեռքով, նոյն թանգորով, որով Մկրտիչ եպիսկոպոսը իւր ընծայականն է գրել, և, թէեւ փորձել է մի քանի դէպքում իւր սեպհական գիրը կեղծել և հին երկաթագրով գրել՝ սակայն այդ նրան չի՝ յաջուել: Մկրտիչ եպիսկոպոսը երեւի հին ձեռագրերով պարապած անձնաւորութիւնը չէր, այլապէս նա կ'իմանար որ հին ժամանակները իւր ընդունած եղանակով երբէք յիշատակարաններ չէին գրում: Այդ բանը, կարծում եմ, կ'խոստովանի նաեւ Սահակ Կաթողիկոսը, որը ցուցակագրել է Երուսալէմի ձեռագրերը : Միւս կողմից քանի որ Տրդատ եպիսկոպոս Պալեանլ անցեալ տարրույ « Ավեւելք » թերթի հ. Ե671 գրած յօդուածում ենթագրել է, որ ես Երուսալէմի հին Աւետարանը չեմ ունեցել իմ ձեռին, այլ գուցէ մի ուրիշ օրինակ, որովհետեւ նա զժուարանում է հաւատալ որ Սահակ եպիսկոպոսը սիաւլուած լինի, այս իմ յօդուածը կարգաւոց յեաց կ'համոզուի, որ իմ ձեռքում ուրիշ օրինակ չի եղել, Երուսալէմում

այդպիսի « յիշատակարաններով » միայն
մի ձեռագիր կայ: իսկ թէ Սահակ և վիճա-
կոպուր ինչո՞ւ է սփալւել, ես էլ չզիտեմ:

Մուռմ է մի կարեւոր հարց եւս լուծել,
թէ Տիգրանակերտցի և պիտիպուսը ո՞ր տե-
ղից է վերցրել իւր յիշատակարանի տե-
ղեկութիւնները: Քանի որ ձեռագիրը վեր-
ցրել է Մշոյ ս. Յոհան Գանցից, ուստի
նա ենթադրել է որ Հարիւրաւոր տարիներ
առաջ գրուած ձեռագիրը իւր սկզբնական
գրութեան տեղից չի փոխուել, և կարդա-
ցած լինելով Յոհան Մամիկոնեանի պատ-
մութիւնը կամ աւելի հաւանական՝ Զամ-
շեանի Հայոց Պատմութիւնը՝ փնտուել է
Մուշեղ Մամիկոնեան նշանաւոր իշխանին,
Ոծ քաղաքը և ոմն Գրիգոր Երէց որին գա-
ւառաբարբառով կոչում է Գրիգոր Երէց:

Եր իսկապէս Զամշեանի երրորդ հասորի
մէջ (էջ 307 Գ. ԽԸ) Մուշեղի և Գայլ
Վահանի բաջազործութեանց թուականը
նշանակուած է լուսանցում « 602-ի՞ս »,
որից, համարեա կարելի է հաստատապէս
պնդել որ Մկրտիչ եպիսկոպոսը իւր տե-
ղեկութիւնը բաղել է: Ալյովէս վարուելով
նա, ինչ խօսք, նպատակ է ունեցել բար-
ձրացնել իւր ձեռագրի յարգը, մինչդեռ,
եթէ նա ծանօթ լինէր հայ ձեռագրերի
հետ, Կ' հասկանար որ իւր ձեռագրով
իսկապէս շատ յարգի է, որովհետեւ հայ
պահուած բոլոր ձեռագրերից հնագոյնն է,
ամենայն հաւանականութեամբ աւելի հին
քան Լազարեան ճեմարանի ձեռագիրը,
թէեւ դժուարանում ենք դարը որոշելու:

Յատուկ ուսումնասիրութեան առարկայ
է եղել Խջմիածնի նշանաւոր փղոսկրեայ
Աւետարանը. լուսատիպ վերարտազրու-
թեամբ հանրամատչելի դարձաւ Լազա-
րեան ճեմարանի Աւետարանը. հրատարա-
կուեց Մւլք Բագուէու Աւետարանի ու-
սումնասիրութիւնը, ժամանակն է որ Ե-
րուսալէմի Աւետարանը եւս մասնակի ու-
սումնասիրութեան առարկայ ծառայի:

ՄԱՍԻՆ ԳԱՐԱԳՈՒՅՆ

Վ. Ա. Ա. 1907 20 Յունիսի:

ՊՐՈՅ. ԼԵՄԱՆԻ.

Նիւթեիր Հայուստանի Խնադանի պատ-
մութեան:

Յաւելուած դոկտ. Մարտ Փան Բերշե-
մի, « Արարական արձանագիրը Հայաստա-
նէն և Տիարպէրիրէն » :

Անցեալ տարւոյ վերջերը լոյս տեսան
մասամբ՝ գիտական արդինք այն ճանա-
պարհորդութեան՝ զոր ինն տարի յառաջ (1898/99) կատարեցին Հայաստան լե-
ման և Բելք գիտնականը: Հրատարակման
համար ցարդ շատ գժուարութիւններ կա-
յին, որոց մէկն ալ գուցէ եր գժուարութիւնն՝
որ ծագեցաւ երկու զիտնոցս մէջ և որոյ
կրակու հետագերը կարելի է տեսնել նաև
ի Zeitschr. d. deutsch morgenl. ges.
հասոր 54. (1900):

Խակայն Պրոֆ. Լեման, որ լլջօրէն
կ' աշխատէր ժողովուած նիւթերուն վրայ՝
այժմ ի մեծ ուրախութիւն զիտնոց՝ ընդ-
հատեց այս լուսիթիւնը և կու գայ մեր երկ-
րին հնագոյն պատմութիւնն արձանագրու-
թիւններով լուսարանել. պատմութիւնը
շրջանին երը Հայաստան սակաւին նախ-
ի և ատա Ուրարտու: Կը կոչուէր, և երը
այդ երկրի վրայ կը տիրէր ժողովուրդ մը
հզօք՝ և յաճախ ախոյեան նինուէի բուռն
աշխարհակալաց:

Ուսումնական աշխարհի արդէն ծանօթ
են ուղեւորութիւնը և տեղեկագրութիւնը
Լեմանի և Բելքի, զորս մասամբ ճամ-

1. Գործոյն բուն գրինագիրն է. C. F. Lehmann-
Haupt. Materialien zur älteren Geschichte Armeniens und Mesopotamiens mit einem Beitrag,
Arabische Inschriften aus Arm. und Diyarb. von
Max von Berchem, mit 92 in den Text gedruckten
Abbildungen und 14 Tafeln, Berlin, Weidmannsche Buchhandlung 1907 (20 մարգ): Տպան-
եցած Abhandlungen d. Königl. Ges. der Wiss.
zu Göttingen, philol.-hist. Klasse, neue Folge,
Band IX. Nro. 3. Խնադան մեր յառաջարանին մէջ
սահ ենք, մեր նպատակը չըլլալով ամբողջ գիրը
թարգմանութեամբ բնձայել կիրագրեց թիւ մը փոփո-
խցինք: